

տատուած է: Վերջապէս այս կարճ նկարագրութիւնը կը ծառայէ ցոյց տալու թէ շինութեան ձևն է վրանի մը նման ծածկոյթ մը որ կը ներկայացնէ կանուխէն պղինձէ տախտակ մը որ Ս. Յարութեան տաճարին մէջ կը տեսնուէր վերջին շրջանին (Jéf. էջ 15-16):

19. — Զղջացող մեղաւորը Ս. Գերեզմանին մէջ (1011). — Ո՞վ է այս ուխտաւորը, վերարկուն պատուած, ոտքերը բոկ և արիւնոտած, և որ երուսաղէմի փողոցներուն մէջ կը ձաղկէ ինքզինքը եւ հազիւ կը հասնի Ս. Գերեզմանի տաճարը ուժասպառ և նուազեալ վիճակով մը: Անտրտունջ կը վճարէ պարտազրուած տուրքերը և կիսամեռ երկրպագելով՝ կը կատարէ իր ուխտը Ս. Գերեզմանի մատրան մէջ, իր տըժգունած շրթունքը կը կախուին այն երկրպագելի մարմարին որ ընդունեց և պահեց Յիսուս Քրիստոսի խնկուած մարմինը...:

Այս ուխտաւորն էր Անժուի դուքսը՝ Փուլք, կողոպտող, մարդասպան եւ բառին յոռի առումով աւատականութեան բարբարոս անսանձ տիպարը: Երկրորդ անգամ ըլլալով ան կուգայ իր մեղաց թողութիւն խնդրելու Աստուծմէ եւ գրեթէ շնչասպառ կը հակի Ս. Գերեզմանի քարին վրայ:

Յանկարծ արցունքի հեղեղ մը կը հոսի իր աչքերէն, լորձք մը կը բռնէ զինքը, սարսուռ մը կը ցնցէ իր ցաւատանջ անդամները, իր ջղազար ձեռքովը մերթ

(\*) Յովնանէն եպո. Երուսաղէմացի Ս. Յարութեան առաստաղի մասին հետեւեալը գրած է. «Արդ մեծ գմբէթն է արնրնապաս նյա (131) մեծամեծ գերանօք շինեալ. ի ներսյ յայնաղի եւ ի ծայրն քաղելով սակաւ սակաւ նեղասեղմեալ, բողով ի գլուխն բաց, ըզմեծ բոլորակ լուսամբս մի հիւսեալ պղնձէ բէլի» (Հանք. էջ 164):